«ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ
"ARMENIAN WATER AND SEWERAGE" CJSC

www.armwater.am

20.02.15 N: ՑԳ1-03/259

Ձեր N: ________________

ՀՐԱՎԵՐ

***"Հայջրմուղկոյուղի"ՓԲԸ-ի կարիքների համար՝***

**հանդերձանքի** (ամառային բանվորական արտահագուստ/ Ամառային բանվորական կոշիկ)

**ձեռքբերման**

Հարգելի մասնակիցներ

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում *"Հայջրմուղկոյուղի"* ՓԲԸ-ի (այսուհետև՝ Գնորդ) կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել Գնումների աջակցման կենտրոնի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 4-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով նախատեսված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված **հանդերձանքի** (ամառային բանվորական արտահագուստ/ Ամառային բանվորական կոշիկ) ձեռքբերումը: Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «**ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-11/10-15/08**»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել *ք.Երևան, Վարդանանց փակ.8, 5-րդ հարկ* հասցեով, մինչև *2015թ. Մարտի 5- ին ժամը՝ 15:00-ն:* Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար *Հայկ Հովհաննիսյանը*: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն *ք.Երևան, Վարդանանց փակ.8, 5-րդ հարկ* հասցեում, 2015թ. *Մարտի 5-ին, ժամը՝ 15:00-ին:*

Գնման առարկա է հանդիսանում *"Հայջրմուղկոյուղի"* ՓԲԸ-ի կարիքների համար **հանդերձանքի** ձեռքբերումը:

*"Հայջրմուղկոյուղի"* ՓԲԸ-ի կարիքների համար **հանդերձանքի** /բաղկացած 2 չափաբաժնից՝ (1) ամառային բանվորական արտահագուստ և (2) ամառային բանվորական կոշիկ/ տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում *(Հավելված N6)*, ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ *(Հավելված N7)*: Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել **ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10** ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Մասնակիցը հայտով ներկայացնում է առաջարկված ապրանքի ծագման երկիրը իսկ համարժեք գնման առարկայի դեպքում՝ ներկայացնում է համարժեք գնման առարկայի անվանումը և ծագման երկիրը:

*"Հայջրմուղկոյուղի"* ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ hho@armwater.am: Հեռ՝ (010) 54-06-85:

Պատվիրատու՝ *"Հայջրմուղկոյուղի"* ՓԲԸ

Գլխավոր տնօրեն՝ Պ. Լ ո ր ե ն

Գլխավոր օֆիսանյակ
ՀՀ, ք. Երևան, 0010,
Վարդանանց փակուղի 8ա
Head Office
8A Vardanants blind alley,
Yerevan, 0010, Armenia

1-71
info@armwater.am